



ԼՐԱՏՈՒ

Թիի 9 - Մարտ 2026



75 տարի է Սերունդների Հայեցի Դաստիարակություն





Տնօրէնութեան խօսքը

Երբ յետադարձ ակնարկ մը նետենք մեր ուղեւորութեան որպէս կրթական հաստատութիւն, մեզ կը պարուրեն խորունկ հպարտութեան եւ երախտագիտութեան զգացումներ:

2026 թուականին Վահան Թեքէեան Վարժարանը հասաւ իսկապէս պատմական հանգրուանի մը՝ իր հիմնադրութեան ադամանդեայ 75-ամեակին: Այս պահը մեզ կը հրաւիրէ կանգ առնելու, տօնելու եւ մեծարելու այն ժառանգութիւնը, որ կառուցուած է նուիրումով, հաստատականութեամբ եւ միացեալ նպատակի գիտակցութեամբ:

Եօթանասունհինգ տարիներ շարունակ Վահան Թեքէեան Վարժարանը եղած է ոչ միայն ուսումնական կեդրոն մը, այլ համայնք մը, ուր երիտասարդ միտքեր կը խնամուին, արժէքներ կը զօրանան եւ ապագաներ կը կերտուին: Թեքէեան Մշակութային Միութեան Հիմնադիրներուն տեսլականն ու նուիրումը միացած անխոնջ ջանքերով, Հոգաբարձութեան եւ Կրթական մարմիններուն, Տնօրէններուն, բազմաթիւ սերունդներու ուսուցչակազմերուն, աշակերտներուն, ծնողներուն եւ շրջանաւարտներուն հետ ստեղծած են ամուր ու մնայուն հիմք մը, որ մինչեւ այսօր կը շարունակէ ուղղել մեզ:

Երբ դէպի ապագան կը նայինք, անցեալի մեր դասերը յառաջ կը տանինք նորոգուած ներշնչումով: Սեր ժառանգութիւնը մեզի կը յիշեցնէ, որ գերազանցութիւնը մէկ պահուան մէջ չի կերտուիր, այլ՝ շարունակական ջանքերով, բարոյական ուղղամտութեամբ եւ իրաքանչիւր աշակերտի ներուժին հանդէպ ունեցած հաւատքով: Այս արժէքները մեր հիմքին մէջ պահելով, մենք կը շարունակենք հաւատարիմ մնալ մեր առաքելութեան՝ զինելով մեր աշակերտները վստահութեամբ, կարեկցանքով եւ նպատակասլացութեամբ առաջնորդելու մշտապէս փոփոխուող այս աշխարհին մէջ:

75-ամեակը վերանորոգման ու մեր ձեռքբերումները տօնելու մեծառիթ մը պիտի չըլլայ միայն, այլ՝ մեր ժառանգութիւնը մեծարելու եւ գալիք սերունդներուն համար որակաւոր կրթութիւն ապահովելու յանձնառութիւն: Մինչ միասնաբար կը գործենք՝ անհամբեր կը սպասենք այս ուղեւորութիւնը բաժնեկցելու մեր ամբողջ դպրոցական ընտանիքին՝ հետ, պահպանելու եւ զօրացնելու Վահան Թեքէեան Վարժարանի հպարտ ամանդութիւնը:

Շնորհակալութիւն կը յայտնենք Ձեզի, որ կը հանդիսանաք մեր ընտանիքի անբաժանելի մէկ մասնիկը եւ ձեր ներդրումը կը բերէք այն ժառանգութեան, որ պիտի շարունակէ երկար տարիներ գերազանցութիւն ներշնչել:

Երախտագիտութեամբ՝

Սեւանա Սեմերձեան Տարազձեան

Վահան Թեքեան Միջն. Վարժարանի Նախակրթարանի Գրադարանի Բացումը

Շաբաթ, 27 Դեկտեմբեր 2025-ին Վարդանանց եկեղեցույ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն, Վահան Թեքեան վարժարանի հոգաբարձութեան նախկին անդամ՝ ողբացեալ Տոքթ. Վազգէն Ժամկոչեանի:

Յաւարտ հոգեհանգստեան արարողութեան, տեղի ունեցաւ Վարժարանիս առաջին յարկի գրադարանի անուանումը ,Պատանեկան Գրադարան-ի ի յիշատակ Տոքթ. Վազգէն Ժամկոչեանի:





Գրադարանի բացման արարողությունը կատարուեցաւ ներկայութեամբ՝ ողբացեալի կողակից Տիկ. Կարինէ Ժամկոչեանի, զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն ու հարազատներուն, Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ Տոքթ. Աւետիս Տազէսեանի եւ պատուարժան անդամներու, Վահան Թէքէեան վարժարանի հոգաբարձութեան ատենապետուհի Տիկ. Անի Լաչինեան Մակարեանի եւ պատուարժան անդամներուն, Տնօրէնուհի Տիկ. Սեւանա Սեմերճեան Տարագճեանի եւ Վարժարանիս ուսուցչակազմին ու պաշտօնէութեան:

Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Աւետիս Տազէսեանի սրտառու խօսքէն ետք գրադարանին կապոյտ ժապաւէնը հատեցին ողբացեալի այրին Տիկ. Կարինէն եւ թոռնիկը՝ փոքրիկն Վազգէն Ժամկոչեան:



Ամփոփ տեղեկագիր Վահան Թեքեան Միջն. Վարժարանի 2025-2026 ուսումնական տարուայ ծրագիրներուն եւ գործունէութիւններուն

2025-2026 Տարեշրջանի Վերամուտ -Նախակրթարանի եւ Միջնակարգի



Սէն Եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի Վերամուտ



Ակադեմական Գործունեություններ:

Մարդ-մեքենաշինությունը Սէմ և Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզին մէջ

Սէմ և Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի դասարաններու փոքրիկները հիանալի ժամանակ կ'անցընեն ROBOTICS արուեստագիտութեան դասընթացքին:



STEAM Արհեստավարժական Ուսումնական Ծրագիր

Շարունակեցինք ներառել Անգլիական SAM labs-ի "STEAM" ծրագրի գործածությունը համագործակցաբար Professional Learning Center-ի հետ:



Նկարագիրի Կրթութեան Ծրագիրի Հիմնական Նիւթեր

Սպառնացում



Մաքրութիւն



Ներողամտութիւն



Ապահովութիւն



Արտասանական Մրցում

16 Յունուար 2026-ին, տեղի ունեցավ արտասանական մրցում վարժարանիս Պարսամեան սրահին մէջ: Աւարտին՝ արժանաւոր աշակերտները ստացան յատուկ մրցանակներ:



Ճիշդ Հնչենք

23 Փետրուար 2026-ին, վարժարանիս Յակոբ Պարսամեան սրահին ներս տեղի ունեցավ միջդասարանային, Ճիշդ Հնչենք մրցումը, որուն մասնակցեցեցան Նախ. Զ., Միջն. Ա. եւ Բ. դասարաններու խումբ մը աշակերտներ: Շահող աշակերտները արժանացան գնահատագիրներու:



Առողջապահական Ընդհանուր Զնման Օր

Մեր վարժարանը այցելեց Հաուլրտ Գարակեօզեան Հաստատութեան Լիբանանի դարմանատան անձնակազմին խումբ մը:

Շնորհակալութիւն կը յայտնենք Հաուլրտ Գարակեօզեան Հաստատութեան անձնակազմին, ի մասնաւորի տնօրէն Տիար՝ Սերոբ Օհանեանին անոնց անվերապահ աջակցութեան համար:



Ուսուցիչի Վերաորակավորում

EdTech Plus Վերապատրաստման Դասընթացը

17 Սեպտեմբեր 2025-ին, մեր վարժարանի STEAM դասապահներու ուսուցիչները՝ Տիկին Սինթիա Նաքաշեան, Օրդ. Ռիթա Ակոբեան եւ Պրն. Ալետիս Տիպան, մասնակցեցան EdTech Plus-ի գրասենեակին մէջ կայացած վերապատրաստման դասընթացին՝ ծանօթանալու Sam Labs-ի նորագոյն ծրագիրներուն, ներառեալ Root Robot-ի մեկնարկին:

Այս նորարարական լուծումները պիտի հարստացնեն մեր աշակերտներուն ուսումնական փորձառութիւնը՝ զայն դարձնելով աւելի ներգրաւիչ:



Արեւելումի Օր

25 Հոկտեմբեր 2025ին, վարժարանիս ուսուցչակազմէն խումբ մը ուսուցիչ-ուսուցչուհիներ մասնակցեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան , հորէն Ա. կեդրոնի յանձնախումբին կազմակերպած Արեւստական Բանականութեան արեւելումի օրուան, համագործակցութեամբ՝ Հայկազեան համալսարանի:



Արհեստական Բանականության Հմտութիւնը եւ Ընկերային, Զգացական Ուսուցումը

9 Յունուար 2026ին, Վահան Թէքէեան վարժարանի ուսուցչակազմը Պարսամեան սրահէն ներս հետեւեցաւ Ընկերային եւ Զգացական ուսուցման դասընթացքի մը, որուն մէջ կը ներառէր Արհեստական Բանականութեան հմտութեան որոշ ծրագիրներ:

Շնորհակալութիւն կը յայտնենք Դոկտ. Մէյրի Կիրինլեանին այս շահեկան աշխատանոցին համար:



Նախագծային Ուսուցման Աշխատանոց

20 Փետրուար 2026-ին, մեր նուիրեալ ուսուցիչները մասնակցեցան Նախագծային Ուսուցման աշխատանոցին, որ վարեց ընկերայնութեան ոլորտի մասնագէտ Դոկտ. Մէյրի Ղազարեան Կիրինլեանը:



Բաց Դռներ Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզէն ներս

18 Դեկտեմբեր 2025-ին, Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզէն ներս տեղի ունեցաւ, Բաց Դռներ կրթական ծրագիրը: Սոյն միջոցառումը առիթ տուաւ թէ՛ ծնողներու, եւ թէ՛ ուսուցիչներուն՝ զիրար անելի լաւ ծանօնելու, ինչպէս նաեւ փոխհամագործակցութեամբ սերտօրէն ներգրաւուելու դպրոցական կեանքին մէջ: Մեր ծնողները ջերմօրէն գնահատեցին ուսուցիչներուն հետ անմիջականօրէն երկխօսելու հնարաւորութիւնը: Առաւել, անոնք վերստին վստահութեամբ ներշնչուեցան իրենց զաւակներուն ստացած որակաւոր հոգատարութեան ու դաստիարակութեան համար:



Մշակութային Տօներ:

Թարգմանչաց Տօն

14 Հոկտեմբեր 2025-ին, վարժարանիս Յակոբ Պարսամեան սրահին ներս նշուեցաւ Ս. Թարգմանչաց տօնը: Օրուան հիւր բանախօսն էր Հայ կաթողիկէ Սրբ. Փրկիչ եկեղեցւոյ ժողովրդապետ՝ Հայր Սահակ Վարդապետ Բէշիշեան, որ աշակերտութեան փոխանցեց ոգեշունչ եւ հոգեպարար պատգամ մը:



Լիբանանի Անկախութեան Տօն

21 Նոյեմբեր 2025-ին, մեծ խանդավառութեամբ տօնեցինք Լիբանանի Անկախութեան տօնը :



Վարդանանց Տօն:

18 Փետրուար 2026-ին, վարժարանիս Յակոբ Պարսամեան սրահին մէջ կայացաւ Վարդանանց հերոսամարտի յիշատակը ոգեկոչող աշակերտական ձեռնարկը՝ ներկայութեամբ հիւր պատգամաբեր Արժանապատիւ Տէր Միքայէլ Թին. Տէմիրձեանի եւ հոգաբարձութեան փոխ-ատենապետ Տիար՝ Պերժ Արապեանի:



Բարեկենդան

14 Փետրուար 2026-ին, Վահան Թեքեան Վարժարանի Սէմ և Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի հոգեհատորները մեծ խանդավառութեամբ նշեցին Բուն Բարեկենդանը:



Տարբեր Տոնակատարություններ:

Պրպարա

4 Դեկտեմբեր 2025-ին ունեցանք
դասարանային ատենամարզանք՝ Պրպարա:



Սուրբ Ծնունդի եւ նոր Տարւոյն բարձր տրամադրութիւն դպրոցէն ներս

19 Դեկտեմբեր 2025-ին, մեր վարժարանին մէջ ունեցանք Կաղանդի յիշարժան տօնակատարութիւն՝ Powerful Kids Team-ի անակնկալ այցելութեամբ: Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք Թէքէեանցի բարերարներ, հպարտ շրջանաւարտներ՝ Աւագեան ընտանիքին, որոնց սրտաբոլս նուիրատուութեան շնորհիւ իրականացաւ այս բոլորը:





Ընդունելության Յոթմի Պապ Լեւոն ԺԴ-ին

Պուրճ Յամուտի
քաղաքապետարանի
կազմակերպութեամբ, 2
Դեկտեմբեր 2025-ին, Պուրճ
Յամուտի մայրուղիին վրայ տեղի
ունեցաւ ժողովրդական
հանդիսատու ընդունելութիւն ի
պատիւ Յոթմի Պապ Լեւոն ԺԴ-ին:
Սոյն ընդունելութեան շարքին էին
նաեւ մեր վարժարանի
Միջնակարգ Ա., Բ. եւ Գ.
դասարաններու աշակերտները:



Ընկերային Ծառայություն

11 Դեկտեմբեր 2025-ին, Հարուրտ Գարակեօգեան Հաստատության կողմէ կազմակերպուած Սրբ. Ծնունդի ձեռնարկին, իր մասնակցութիւնը բերաւ վարժարանիս Միշն. Գ. դասարանի աշակերտուիհ՝ Մէյրի Ղազարեան հայկական նազ պարով մը, որ տեղի ունեցաւ Երջօ Սամուէլեան սրահին մէջ: Յատուկ շնորհակալութիւն պարուսոյց Օրդ. Արին Սեֆերեանին իր հետետողական աշխատանքին համար:



“Մասնագիտութեան Օր” Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզէն ներս:



Յիւրեր

Տիար Վարդան Նազիրեան

2025-ին, Վահան Թէքէեան միջնակարգ վարժարանը պատին ունեցաւ հիւրընկալելու հռչակաւոր անձնաւորութիւն մը, մեր համայնքի բարեկամ եւ նուիրատու՝ Տիար Վարդան Նազիրեանը՝ Ա.Մ.Ն.-էն: Այցելութիւնը համախմբեց Թ.Մ.Մ. Յիմնադիրներու Մարմնի ատենապետ՝ Տիար Յակոբ Գասարճեանը, Վարժարանիս Յոգաբարձութեան ատենապետուհի՝ Տիկ. Անի Լաչինեան Մակարեանը, Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Աւետիս Տագէսեանը, Ռ.Ա.Կ. Լիբանանի Շրջանային Վարչութեան փոխատենապետ՝ Տիար Յարութ Երկանեանը եւ վարժարանիս տնօրէնուհի՝ Տիկ. Սեւանա Սեմերճեան Տարագճեանը: Սոյն հանդիպումը մտաւոր հարթակ մը հանդիսացաւ գաղափարներու փոխանակումի՝ վարժարանիս զարգացման եւ յառաջընթացին վերաբերեալ: Իրայատուկ կերպով ուշադրութեան առարկայ դարձաւ նաեւ վարժարանիս 75-ամեակը, որ կարեւոր հանգրուան մըն է, վկայելու վարժարանիս երկարամեայ նուիրումներուն՝ կրթութեան եւ համայնքային ծառայութեան մարզերէն ներս:



Դոկտ. Յրայր Ճէպէճեան

6 Նոյեմբեր 2025-ին, Վահան Թէքէեան վարժարանի Նախակրթարանի Դ., Ե., Զ. եւ Միջնակարգ Ա. դասարանի աշակերտները առիթ ունեցան հանդիպելու եւ մօտէն ծանօթանալու վարժարանս հիւրաբար գտնուող Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան ընդհանուր քարտուղար եւ Միջին Արեւելքի Աստուածաշնչային Ընկերութեան ներկայացուցիչ Դոկտ. Յրայր Ճէպէճեանին հետ:

Հանդիպումը եղաւ ջերմ, ոգետրիչ եւ ներշնչող: Ան աշակերտներուն ներկայացուց պարզ, պատկերազարդ եւ սիրով լեցուն Մանուկներու Աստուածաշունչը միասին կարդանք եւ պատմենք գիրքը:



Կրթական և Մշակութային Պտույտներ:

Սին Էլ Ֆիլի Հանրային Պարտէզ

Սէմ և Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի Կոկոն և Ծաղիկ դասարանի աշակերտները հաճելի ժամանակ անցուցին Սին Էլ Ֆիլի հանրային պարտէզը՝ դիմաւորելու համար աշունը:



Լիսի Թուրունձեան Ցուցարահ

8 Դեկտեմբեր 2025-ին, Վահան Թեքեան Վարժարանի Նախակրթարան Գ. դասարանէն Միջնակարգ Գ. դասարանի աշակերտները ներկայ գտնուեցան Համազգայինի, Վահէ Սէթեան հրատարակչատան կազմակերպած, Հայ Գիրքի Համահայկական Ցուցահանդէս-Փառատօնին:



Աշակերտներու Տպաւորութիւնները:

Երկուշաբթի, 8 Դեկտեմբեր 2025-ին, այցելեցինք Փիւնիկ սրահ՝ ներկայ գտնուելու Համազգայինի գիրքի ցուցահանդէսին: Բազմաթիւ գիրքեր տեսանք: Ուշադրութիւնս գրաւեց գիրք մը Այնըշթայնի մասին: Ուզեցի գիտնալ, թէ ո՞վ էր ան: Ուսուցչուհիս ըսաւ, որ ան մեծ գիտնական մըն էր: Երբ հինգ տարեկան էր, հայրը կողմնացոյց մը նուիրած էր անոր, ու այդ օրէն սկսեալ ինք հետաքրքրուած էր գիտութեամբ: Ուզեցի հատ մը ունենալ այդ գիրքէն:

Նախ.Գ. դասարան - Մարիա Պէքարեան

Երկուշաբթի, 8 Դեկտեմբեր 2025-ին, այցելեցինք մեր դպրոցին կից գտնուող փիւնիկ սրահը, Համազգայինի կազմակերպած գիրքի ցուցահանդէսին ներկայ գտնուելու համար: Անթիւ ու անհամար գիրքեր ցուցադրուած էին: Արդեօք ո՞ր մէկը ընտրէի: Մտածեցի ու, Հայրենի Պատմութիւններէ խորագրով գիրքը ընտրեցի ու գնեցի, որպէսզի ամրան արձակուրդիս կարդամ զայն ու աւելի մօտէն ծանօթանամ հայրենիքիս:

Նախ.Դ. դասարան - Ժան Ալեք Գաթրձեան

Ղաթա

Այս տարի Լիբանանի Անկախութեան օրը յատուկ նշանակութիւն ունէր Վահան Թէքէեան վարժարանի աշակերտներուն համար, որովհետեւ Նոյեմբեր 12 2025-ին անոնք հնարաւորութիւնը ունեցան այցելելու Ղաթայի Զօրանոցը:



Աշակերտներու Տպաւորութիւնները:

Չորեքշաբթի, 12 Նոյեմբեր 2025-ին, Լիբանանի Անկախութեան Տօնին առիթով այցելեցինք Ղաթայի զօրանոցը: Երբ հասանք, մեծ խանդավառութեամբ դիտեցինք զինուորներուն վարժարանքները: Ապա ելանք հրասայլին վրայ՝ դրօշակները բարձր բռնած, ինչպէս նաեւ ուղղաթիռին մէջ նստանք նկարուելու համար: Յետոյ այցելեցինք զինուորներուն դամբարանը, որմէ ետք մտանք թանգարան, ուր տեսանք նահատակ զինուորներուն տարազները, զէնքերը եւ ժամացոյցները: Վերջապէս յուզումով բաժնուեցանք զինուորներէն մեր հետ տանելով հաճելի յիշատակներ:

Աննապէլ Ապուլաթեան - Նախ.Գ. Դասարան

Աշակերտներու Տպաւորութիւնները:

Չորեքշաբթի, 12 Նոյեմբեր 2025-ին, Լիբանանի Անկախութեան Տօնին առիթով Ղաթայի գօրանոցը զացինք: Երբ հասանք, զինուորները մեզ դիմաւորեցին մեծ սիրով: Զինուորական ինքնաշարժներով այցելեցինք նահատակ զինուորներուն դամբարանը, ուր աղօթեցինք անոնց հոգիներուն համար: Ապա թանգարան մտանք, ուր ցուցադրուած էին նահատակ զինուորներուն տարազներն ու իրերը: Դիտեցինք տեսերիզ մը եւ յուզուեցանք տեսնելով, թէ ինչպէս անվախ զինուորները իրենց ամբողջ ուժով պատերազմած են, որպէսզի Լիբանանը եւ մեզ ազատեն մեր թշնամիներէն՝ վեր պահելով լիբանանեան դրօշակը: Շնորհակալ ենք ձեզի քաջ զինուորներ: Ես շատ կը սիրեմ ձեզ եւ իմ ծննդավայրս՝ Լիբանանը:

Քէյթի Պետիրեան - Նախ.Դ. Դասարան



ՀԲԸՄ-ՅԵԸ, ԱՐԻՆ Պարախումբ

28 Նոյեմբեր 2025-ին, վարժարանիս Նախ. Ա.-էն Միջն. Գ. դասարանի աշակերտները ուղղուեցան Քազինո Տը Լիպանի շքեղ հանդիսասրահ, ներկայ գտնուելու ՀԲԸՄ-ՅԵԸ ,ԱՐԻՆ պարախումբի նորագոյն, Կ'ուզեմ Երթալ Հայաստան ելոյթին:



Աշակերտներու Տպաւորութիւնները:

Ուրբաթ, 28 Նոյեմբեր 2025-ի առաւօտեան, մեր վարժարանի աշակերտներով ուղղուեցանք դէպի Քազինո Տիւ Լիպանի հանդիսասրահ՝ ներկայ գտնուելու Հ.Բ.Ը.Մ.-Յ.Ե.Ը.-ի , Արին պարախումբի ելոյթին, որուն խորագիրն էր ,Կ'ուզեմ Երթալ Հայաստան: Պարողները պարեցին հայկական, արաբական եւ օտար պարեր: Անոնք ներկայացուցին գեղեցիկ նազ եւ խրոխտ պարեր: Վերջապէս, ինչ աղուոր օր մը անցուցինք: Շատ ուրախ վերադարձայ դպրոց:

Ալիք Տարագճեան - Նախ. Ե. Դասարան

Ուրբաթ, 28 Նոյեմբեր 2025-ի առաւօտեան, մենք ներկայ գտնուեցանք Հ.Բ.Ը.Մ.-Յ.Ե.Ը. , Արին պարախումբի տարեկան ելոյթին: Պարախումբի անդամները պարեցին հայկական, արաբական, եւ այլ օտար պարեր: Անոնք հագած էին գոյնզգոյն պարային զգեստներ: Իտաքանչիւր պար հայկական խորհրդանշի մը կը ներկայացնէր: Շատ հաճելի զգացում էր տեսնել մեր դասընկերուին՝ Սէրլին, որ պարախումբին մաս կը կազմէր: Ան հիանալի կերպով պարեց: Շնորհակալութիւն կը յայտնեմ տիկին Սեւանային այս առիթը մեզի ընծայելուն համար:

Ռիթա-Մարիա Պաշրգճեան - Նախ. Զ. դասարան

Ուրբաթ, 28 Նոյեմբեր 2025-ի առաւօտեան, մեր վարժարանի աշակերտներով գացինք Քազինո Տիւ Լիպան: Պարողները հիանալի եւ տպաւորիչ ձեւով պարեցին: Անոնք հագած էին տարատեսակ եւ գոյնզգոյն պարային հագուստներ: Պաստառին վրայ կը ցուցադրուէր գեղեցկօրէն մշակուած եւ հետաքրքրական տեսանքի մը Հայաստանի մասին:

Վերջապէս շնորհակալ եմ, որ դպրոցս յաճախ մեզ կը տանի մշակութային ձեռնարկներու:

Մեթիւ Իշխանեան - Միջն. Ա. դասարան

Պուրճ Համուտի Հանրային Պարտեզ

27 Յունուար 2026-ին, Նախ. Բ. եւ Գ. դասարաններու աշակերտները ուղղուեցան Պուրճ Համուտի հանրային պարտեզ՝ ներկայ գտնուելու քաղաքապետարանին կողմէ կազմակերպուած ծառատունկին:



Աշակերտներու Տպաւորութիւնները:

Երեքշաբթի, 27 Յունուար 2026-ին, Պուրճ Համուտի հանրային պարտեզը զացինք: Հոն մեզ դիմաւորեց երկրագործ մը: Ան բացատրեց, թէ ինչպէս հող կը տանին բոյսերուն, որպէսզի անոնք աճին: Ապա մեզի գաւաթներ բաժնեցին, որոնց մէջ հող լեցուցինք, ելակ կամ ռեհան ցանեցինք ու ջրեցինք զանոնք: Հանրային պարտեզին մէջ ալ, հողը փորեցինք ու բոյսեր ցանեցինք: Ուրախացանք նաեւ խաղաղալարին մէջ խաղալով: Վերջապէս դպրոց վերադարձանք մեր հետ բերելով մեր ցանած բոյսերը: Ես լաւ հող պիտի տանիմ իմ բոյսիս, որպէսզի քանի մը շաբաթ ետք կարենամ համեղ ելակ ուտել:

Ալին Դաւիթեան -մ.Նախ.Գ. դասարան

Մրցանք

Սրտանց կը շնորհաւորենք Շարպըլ Սալամի Էլ Պէրըշ որուն աշխատանքը ցուցադրուեցաւ Fabiano-ի կողմէ կազմակերպուած, "Charles Corm et ses écrits: dessine-moi un poème" ցուցահանդէսի ընթացքին, Շաբաթ, 21 Փետրուար 2026-ին Էշրէֆիէի, Շարլ Բորմ Զիմնարկութեան կեդրոնին մէջ:





Email: info@vahantekeyan.com
Website: www.vahantekeyan.com
Facebook: Vahan Tekeyan School in Lebanon
Instagram: [vahan.tekeyan](https://www.instagram.com/vahan.tekeyan)
Phone number: 01/260525 - 01/260574